

ՀՈՂ ՄԱՅՐԵՆԻՆ

Posted on June 25, 2022 by Keghart



Category: [Editorials](#)



Keghart.org, Խմբագրական, 25 Յունիս 2022**(Խմբագրականը կարելի է ընթերցել [անգլերենով](#))**

«ՀՈՂ» բառը իր նեղ իմաստով կը նշանակե մայր բնութեան տարրերէն մէկը, որ հիները զայն դարձուցած են պաշտամունքի առարկայ, ինչպէս ջուրը, կրակը, լոյսը, արեւը: Հողը կու տայ սնունդ, բարիք եւ կեանք: Ահա թէ ինչու լայն իմաստով կը նշանակե նաեւ բնօրրան եւ հայրենիք:

Քաղաքակրթութեան առաջին այն պահերէն, երբ մարդը դարձած է նստակեաց, ամենէն նախնական ազգագրական ստեղծագործութիւններուն մէջ հողը սկսած է հոմանիշ դառնալ հայրենիքի. ասկէ ալ «հող հայրենի» արտայայտութիւնը: Յետագայ դարերուն յառաջացած են նոր բառեր՝ մայր հող, մայր ցամաք, հայրենի տուն եւ այլ բառեր ու բառակապակցութիւններ:

Մշակոյթը կը գոյանայ ու կը զարգանայ հողի վրայ: Մարդիկ իրենց բնակարաններն ու պաշտամունքային շինութիւնները հողին վրայ կը կառուցեն, իրենց նախնիները հողին մէջ կը թաղեն, «հող էիր հող դառնաս» կ'ըսեն: Բանաստեղծ Պետրոս Դուրեան իր բանաստեղծութեան մէջ կ'ըսէ «սեւ մօրդ գնա գոգ»..., իսկ Սիամանթոյի նշանաւոր վերնագիրներէն մէկն է «Ափ մը մոխիր՝ հայրենի տուն»:

Վերջերս «հող-հայրենի»ին նշանակութեան շուրջ այլ «ակադեմական» կարծիքներ կը հնչեն Արեւմուտքի կարգ մը ուսումնական հաստատութիւններէն հիմնուելով ելեկտրոնիկ ճարտարարուեստի (technology) եւ առեւտրական ցանցերու արտակարգ ընդարձակման վրայ: Կը թուի թէ նոր սահմանումներ կը փորձեն տալ հայրենիք հասկացութեան, կասկածի կամ հարցականի տակ կ'առնուին հայրենի սահմաններ հասկացութիւնները: Ատենին Խորհրդային Ռուսաստանի եւ ապա այլ հանրապետութիւններու մէջ հրապարակ նետուած էին «պրոլետարիատի շահերից մեկնած» նմանօրինակ գաղափարներ, որոնք սկսեցին պետական կամ կոմկուսի քաղաքականութեան օրակարգի նիւթ դառնալ: Օրինակ՝ «պրոլետկուլտ»ը (պրոլետարական կուլտուրա-մշակոյթ), հանրապետական եւ մարզային սահմաններու վերացում, ազգային եւ ցեղային արժէքներու համահարթեցում՝ ի հաշիւ ազգային իւրայատկութիւններու մարումին եւ անհետացման: Այդ ատենուան «գաղափարախօսները» գտեր էին բացատրութիւն մը՝ վերացնել «բուրժուական բարքերէ» մնացած ազգային հակասութիւններու եւ «ցեղամոլութեան» (ռասիզմ) հետքերը: Սակայն, որքան ալ արտաքուստ հաճելի եւ համամարդկային թուար այդ՝ ռուսերէնը, ռուսական մշակոյթի գերակայութիւնը եւ յատկապէս ռուսաց լեզուն կը մնար ամենէն նախընտրելի համամիութենական տիրող լեզուն, եւ յաճախ կը լսուէր «Ռուս մեծ ժողովուրդ» արտայայտութիւնը:

Ժամանակը ցոյց տուաւ որ այս համահարթեցումը ազգային իւրայատկութիւններու վերացման պիտի նպաստէր միայն:

Այժմ անգլերենը եւ արեւմտեան (եւրոպական եւ յատկապէս ամերիկեան) կացութեանը, տնտեսական նորմերը, բարքերը, արժէքափերը անուղղակիօրէն կը պարտադրուին աշխարհին: Համակարգիչը իր բոլոր տեսակի սարքերով (այփատ, այֆոն, հաղորդակցութեան եւ լրատուութեան միջոցներ) կը միտին արագացնել այս համահարթեցումը, որուն կը տրուի «համաշխարհայնացում» կախարդական ու առինքնող (globalization, գլոբալիզացիա) եզրը:

Մարդկութիւնը իր տարբեր մշակոյթներով, լեզուներով, ազգային սովորութիւններով, տարազով, ճաշատեսակներով, հաւատալիքներով կը նմանի գեղեցիկ ծաղկեփունջի մը, որուն իւրաքանչիւր ծաղիկը իր բոյրով, գոյնով եւ տեսքով կը նպաստէ այդ գեղեցիկ ծաղկեփունջին շքեղութեան: Եթէ այդ ծաղկեփունջին համար անհրաժեշտ է ունենալ մեծ ծաղկաման մը անապակ ջուրով եւ հարուստ կենսանիւթերով, ապա մարդկութեան համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱՉԱՍ ՀՈՂ: «Առանց հողի բոյսն անգամ մեռանի» ըսած են մեր նախնիները:

Յիշենք 1604-ին Իրանի Շահ Աբբաս թագաւորի կողմէ պարտադրուած բռնագաղթը (յայտնի է նաեւ «Արաքսի անցք» անունով) դէպի Իսֆահան, Թաւրիզ, Նոր Ջուղա եւ այլուր: Իրանահայութեան, ապա անկէ ճիւղաւորուած Հնդկաստանի եւ Ճայրագոյն Արեւելքի հայ համայնքները իրենց զաւակներուն տուած դաստիարակութեան մէջ արթուն պահեցին օր մը հայրենի հող վերադառնալու երազը: Այս վերջինը սկսաւ իրականանալ 1828-ի Ռուս-պարսկական պատերազմի որպէս հետեւանք Թիւրքմենչայի պայմանագրէն ետք, երբ հազարաւոր հայեր 224 տարի ետք բռնեցին տունդարձի ճամբան: Նոյն այդ հայութիւնը անելի քան չորս դար պահեց այդ երազանքը, որ քիչ քիչ կամ պարբերաբար սկսաւ իրականանալ Խորհրդային եւ անկախութեան շրջանին:

Միջազգայնօրէն ճանչցուած սահմաններով հայրենի հող ունենալու եւ հոն կենսագործելու ձգտումը նկատուած է առաջին կամ գլխաւոր յատկանիշը: Այդպէս է որ հնդկահայերը որոշում ընդունած էին հնչուն ոսկիով գնել մեր պատմական հողերը Օսմանեան կայսրութենէն: Դեռ անելին՝ Ա. Համաշխարհային Պատերազմի ավարտէն առաջ ԱՄՆ-էն, Եւրոպայէն եւ Միջին Արեւելքէն հազարաւոր հայ կամաւորներ միացան Դաշնակից ուժերուն եւ անձնագրհաբար կռուեցան Օսմանեան կայսրութեան եւ Քայզերական Գերմանիոյ զօրքերուն դէմ՝ փառաւոր յաղթանակ մը տանելով Երուսաղէմի մօտ գտնուող Արարա վայրին մէջ:

Հիմնական գործօնը, որ կը միաւորէ հայկական սփիւռքն ու Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդը՝ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է մայրենի լեզուով, միասնական մշակոյթով եւ միացեալ երազով:

Homeland: the Vital Glue

(The below editorial is an adaptation of the original Armenian text.)

The words "land or soil" in their narrow sense mean one of the elements of Mother Nature, which the ancients made an object of worship, just as did water, fire, light, and the sun. In a broad sense, it also



means cradle and homeland. At the dawn of civilization, when humanity became sedentary, land / soil began to be synonymous with the homeland, hence the expression "native land". In the following centuries new words appeared: homeland, motherland, fatherland, native house, den, and other words and phrases.

People build their homes and places of worship on the ground, bury their ancestors in the ground, and say, "We ...commit the body to the ground, earth to earth, ashes to ashes, dust to dust." Poet Bedros Tourian says: "Go to your black mother's lap...", meaning the earth; and Siamanto's famous poem is titled "Handful of ashes, home of forefathers".

Recently, new "academic" views on the meaning of "homeland" and culture have been advanced by several Western educational institutions based on exceptional advances in technology and trade networks. The relevance of national borders is brought under question. Decades ago, in Soviet Russia and then in other Soviet republics, in a similar fashion, ideas were launched "in the interests of the proletariat". "Proletarian culture" (proletcult), the removal of republican and regional borders, the levelling of national and racial views at the expense of the disappearance of national characteristics

were the talk of the day. The "ideologues" of that time found excuses to eliminate the traces of international "contradictions" and "racism" left over from "bourgeois morality". However, as attractive and universal these ideas may have sounded, in practice they led to the Russian language becoming the most preferred all-Union language. and often the expression "Great Russian people" would be heard.

Time has shown that this levelling would only contribute to the elimination of national characteristics.

For some time now, it has become clear that the English language and the Western (European and especially American) economic norms, manners, values are indirectly imposed on the world. The computer with all its devices (iPhone, Smart Phone, social media communication, etc.) tends to accelerate this leveling process, which is given the term "globalization". Humanity with its diverse cultures, languages, national customs, costumes, food, and beliefs is a bouquet, where each flower with its aroma, color and appearance contributes to the luxury of the beautiful garland. If it is necessary to have a big vase with pure water rich in nutrients for it, then for humanity it is the native land. Our ancestors said: "Without soil the plant dies."

Let us recall the forced migration of Armenians by Persia's (Iran) Shah Abbas in 1604 (also known as the "Arax Pass") to Isfahan, Tabriz, New Julfa, and elsewhere. The Armenian communities of India and the Far East eventually branched out from the Iranian Armenians. While raising their children, they kept alive the dream that one day they would return to their homeland. That dream began to get realized after the Russo-Persian War of 1828 which concluded with the Treaty of Turkmenchay. Thousands of Armenians took the road home 224 years later after their exile. The same Armenians kept that dream for centuries, and periodically they repatriated during the Soviet and RoA periods.

The aspiration to retake the native land and live there through internationally recognized borders was the dream. That is why the Armenians of India decided to purchase our historical lands from the Ottoman Empire with gold. Moreover, for the same reason, before the end of World War I, thousands of Armenian volunteers from the United States, Europe, and the Middle East joined the allied forces and fought against the Ottoman Empire and the forces of Imperial Germany, gaining a glorious victory at Arara, north of Jerusalem.

The principal factor that unites the Armenian Diaspora and the people of the Republic of Armenia is the homeland with our language, culture, and our united dream.

Pictures: 1) "Mother Armenia" monument overlooking Yerevan and facing Mount Ararat. 2) Monument in honour of the heroes of Arara battle in Palestine

Comments



Avo Tchapanian – 2022-06-25 05:34:47

A Remarkable editorial article, written, corrected and translated by persons whose parents were forcibly driven out from their homeland, intended for readers having the same or similar history, while ALL now willingly continue to choose a life Far Away from their "Homeland", and the remaining inhabitants of this Homeland dream to escape out.